ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

Մ. ԱՐԵՂԵԱՆԻ

(Շարունակութիւն [1])

«Սասունցի Դաւիթ» կամ «Մհերի դուռ», Կ. Պոլիս, 1874, եւ «Դաւիթ եւ Մհեր», Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իբրեւ կէս-պատմական եւ կէս-դիւցազնական հին վէպ։

ԺԲ.

Դիւցազնը ժողովրդի գաղափարապաշտն է, ժողովրդի ցանկութեան մարմնացումն է. բաւական չէ, որ նա միայն դաղաններին զսպէ և աւերիչ դեներին կոտորէ. բացի դաղաններից կան և ուրիշ թշնամի էակներ, թշնամի դիւցազներ, որոնք նոյնքան վնասակար են ժողովրդի համար, որքան դաղաններն ու դեները, և թերևս նրանցից աւելի վնասակար. որովհետև թշնամի դիւցազներն իրանց անչափ ուժի հետ միացրած են և մարդկային բանականութիւնը, որ չ'ունին դաղանները և սպակաս ունին դեները։ Թշնամի դիւցազները մենակ աւելի են, քան թէ բոլոր դեները և բաղմաթիւ հրէշները։ Ահա այսպիսի թշնամի դիւցազներից ևս պէտք է ժողովրդի դաղափար կաղմող դիւցազնը ազատէ իւր ժողովրդին։

Այդպիսի մի թշնամի դիւցազն վէպի մէջ ներկայանում է Մսրամելիքը։ Դաւիթը Սասմայ քաղաքի տէրն է, իսկ Մսրամելիքը Մսրայ քաղաքի տէրը։ Մսրայ մելիք կոչումն է տրւում Մսրայ քաղաքի իշխաղներին, որ յատուկ անուն չէ, այլ մի հասարակ կոչում։ Մսրայ և Սասմայ քաղաքները երկու միմեանց թշնամի կենդրոններ են, որոնց մէջ կռիւն սկըսում է հէնց Աքամելիքի օրով։ Մսրայ մելիքների սերունդն ևս հասարակ մահկանացուների սերունդ չէ։ Հ. Արուանձտեանի վարիանտով՝ այդ իշխա-

[1] Տե՛ս «Մուրճ»-ի 1889 թ. 10 և 11 համարները։

նական ցեղն ևս ծաղում է Աբամելիքից, որ սպանում է Մսրայ թագաւորին։ Այդ թագաւորի կնոջից և Աբամելիքից ապօրինաբար ստեղծում է Մսրայ մելիքների ցեղը. ապօրինի և անդրանիկ ծնունդ, որ չէր կարող երբէք հաշտ աչքով նայել Աբամելիքի օրինաւոր՝ բայց կրտսեր սերնդի վերայ, ինչպէս ապօրինի որդին, օրինաւոր բայց կրտսեր որդու վերայ։ Եւ ահա այս երկու ցեղերի մէջ պատերազմ է սկսւում և, ինչպէս երևում է, չարունակւում է որդէց որդի մինչև Դաւիթը. մէկը սպառնում է Սասմայ քաղաքն աւերել, իսկ միւսը՝ Մսրայ քաղաքը։ Պատերազմի լաջողութիւնը միշտ Սասնու տէրերի կողմն է։ Թէօր Դաւթի ժամանակ, երբ որ սա դեռ երեխայ էր, իսկ հայրը մեռած, Մսրայ մի ուրիշ մելիք չարմար միջոց է գտնում Սասմայ քաղաքն իրան ենթարկելու։

Մսրայ և Սասմայ քաղաքների կոիւները լիշեցնում են Իրանի և Թուրանի կոիւները Շահնամէի մէջ. Իրանի փոխանակ Սասունն է դուրս գալիս, իսկ Թուրանի փոխանակ՝ Մսրայ քաղաքն իւր մելիքներով։ Սասնու տէրերը հանդիսանում են իբրև ժողովրդին սիրելի, ազնիւ ախպեր, որոնց գլխաւոր ուշ ու միտքը նորա վերայ է դարձած, որ իրանց երկիրը պաշտպանեն օտար բռնութիւնների դէմ։ Մսրայ մելիքները, ընդհակառակը, ժողովրդի համար սիրելի չեն, այլ ատելի բռնապետներ են, որոնք մինչև անգամ իրանց սեպհական ժողովրդի վերայ բռնութեամբ են իշխում, և այս լաւ կերպով լատնւում է պատերազմի մէջ «վիր հալիւոր» գինորի խօսքերից. «Դաւիթ, դիւ ինչու էսա մարդեր կը սպանես... Մսրամելիք զօրով ի բերի»։

Ահա այս՝ իւր ժողովրդի համար իսկ ատելի Մսրամելիքը կամենում է իրան հարկատու չինել Սասնու տէրերին և, հաւաքելով իւր ժողովրդից կատարեալ սպառազինութիւն—նորելայ մանուկներ, բեղդար աղաներ, թուխ միրուքաւորներ և սպիտակ միրուքաւորներ, դալիս է Դաւթի վերայ։ Բայց մթթէ Մսրամելիքն անձամբ բաւական չէ կռուելու Դաւթի դէմ։

Մսրամելիքն այնպիսի պարագաներով է նկարագրւած վէպի մէջ, որպիսի պարագաներով նկարագրւում են մեր հէքիաթների մէջ դիւական անճոռնի, հրէշաւոր արարածները։ Նա, իբրև մի տիտանական հսկայ, դևերի պէս եօթն օր անդարթնելի քուն է մտնում. նա այդ քնից չի դարթնել ոչ մի թեթև բանով, որով դարթնում են հասարակ մարդիկ. նրան դարթեցնելու համար պէտք է երկաթէ չամփուրը կամ դուխանի խուրը կրակացնել և տալ նորա ոտքերին։ Պէտք է երեակայել այն հսկան, երկաչնաղէղ, անհիղնդ հսկան, ինչպէս Խորենացին գնում է Իէլի հսկաների համար,—որի համար չլիկացած երկաթով իսարելը նոյնն է, ինչ որ հողածիններին համար լուի կծելը, որից մարդ դարթնում է, բայց դարձեալ թմրութեան քնի մէջ է մտնում [1]։ Վերջապէս Մսրամելիքը դարթնում է և, իբրև մի տարերական

[1]) Արտայայտութեան սոյն եղանակը գտնում ենք և ռուսաց տարերական աւագ դիցազնուհի Նաստասիա Միկուլիշնայի և մարդանման կրտսեր հսկայ Դոբրի-

գերբնական հսկայ, աւելի աւագ քան թէ Դաւիթը, որ մարդանման կրտսեր հսկայ է, մի տեսակ արհամարհական հայեացքով, կարծես, բարձրից՝ ամպերից է նայում Դաւթի վերայ և փչում.—նորա փչելով ամէն մի հասարակ արարած սլիսի թռչի։ Կատարեալ նմանութիւն մեր հէքիաթներում պատմած երկաթէ մարդկանց նկարագրին, որոնցից մէկի պատկերը գրտնում ենք Ս. Սրուանձտեանի «Համով-Հոտով»-ի Խան-Բողուի անձնաւորութեան մէջ։ Երկաթէ մարդ Խան-Բողուի փոնգաոցից Բաղիկանը մի արտ է միայն հեռու թռչում, որովհետև ինքը՝ Բաղիկանն էլ կարիճ մէկն է, գեւերի և ժժդահանների (վիշապների) հետ տուել ու առել է. ման է եկել Լոյս-աշխարհք, Մութ-աշխարհք. Աջոջ-Մաջոջ. Դեւ ու Աղնաւոր, ինսան ու ջանաւար—ամենքի հետ կուել է և ամենքին յաղթել է։

Չը նայելով, որ Մորամելիքն ալսպիսի մի աւագ դիւցազնական ուժի տէր էակ է, բայց նա դարձեալ չէ համարձակւում մենակ գնալ կուի Սասնու վերայ և բաց ճակատով կուի մտնել Դաւթի դէմ. նա ամեն դէպքում խորամանկութեան և խաբէութեան է դիմում։ Առաջին անգամ, հերոսին յատուկ հիւրասիրութեան պատրւակով, Դաւթին խորում, ձգում է քառասուն նետ խորութեամբ հորի մէջ և նենգաւոր մարդու չարախնդալց ժպիտով ասում. «Էն էր, ինչ տը խետ ձի կուիս էնէր. թրխ կենալ էնտեղ, չուր ոսկորքեր փտի»։ Բայց Դաւիթը Խաչ-Պատարագինի գերբնական զօրութեամբ հորից ազատւում է։ Մելիքը դիմում է երկրորդ նենգութեան՝ հերթով կուելուն, որպէս զի ինքն առաջին հարւածն լինցնէ. այս էլ չէ յաջողւում։ Նա գիմում է երրորդ նենգութեան և օգտւում է Դաւթի բարեսրտութիւնից։ Նա ասում է Դաւթին. «Կ՚ուզեմ, որ քառասուն դեաղ խուր փորեմ.—ես երթամ, ընկնեմ մըչ խորուն, քառասուն ջաղցի քար քաշեմ վարիմ, քառասուն դբղած գոմշի կաշի լէ առնեմ, քցեմ վար ջաղցի քարին». բայց Դաւիթը լախտի մի հարւածով «դքառասուն գոմշու կաշին կտրեց, քառասուն ջաղցի քար լէ կտրեց. Մարամելքի գլխու գագաթ լէ կտրեց»։ Ալսպիսի աւասպելական պաշտպանութեան վահանների տակից Մարամելիքի գլխի գագաթը կտրւած է և նա երկու կէս է եղած, բայց դարձեալ, ինչպէս գեւերը հսկաների ձեռքով երկու կէս լինելուց յետոյ, ձայն է տալիս և արհամարհում Դաւթի հարւածը, կարծելով թէ ինքը չէ վնասւած. բայց երբ որ իրան թաղ տուեց, «մէկ կտոր ընկաւ էսաեղ, մէկ էնտեղ»։

ԺԳ

Սասնու տէր Դաւիթն էլ հսկայ է. նա, դեռ մանուկ, առանց ղէնքի

նեխ նիկիտիչի կուի մէջ. Դոբրինիան երբեք անգամ իւր ըոլոր ուժով լախտով հարւածում է Նաստասիային. բայց սա միայն երբորդ անգամը յետ է դառնում և ասում՝ ես կարծում էի թէ մոծակներն են կծում։

դսպել է դաղաններին և կոտորել քառասուն դևերին. բայց այդ դևերն ու դաղաններն ինչ են անարի և չաւերժ հսկայ, խորամանկ Մսրամելիքի մօտ,— չնչին և անիմաստ արարածներ։ Սակայն Դաւիթն, իբրև դիւցազն, պէտք է կուի Մսրամելիքի դէմ։ Հիշա ու թեթև բան չէ այդպիսի մի հրէշաւոր դիւցազնի դէմ կուելը. նորա դէմ կուելու համար հերոսը պէտք է ունենայ աւելի քան իւր ժառանգական բնական ոյժը, և ուրիշ զէնք, քան իւր հովւական ցուպը. և ահա ժողովուրդն իւր դիւցազնին շրջապատում է այնպիսի պաշտպանութեան զէնքերով, որ պէտք է ունենայ ամեն մի կատարեալ դիւցազն։

Ամենից առաջ դիւցազնը պէտք է ունենայ ներքին բարոյական արժանաւորութիւն։ Ժողովրդի հասկացողութեամբ, ինչպէս ամեն մարդու գործի աջողութեան համար պահանջւում է, որ սկսած գործն աստուածահաճոյ լինի, նոյնպէս և դիւցազնի համար պահանջւում է արդարութիւն ունենալ, այսինքն՝ Աստուծու աչքին սիրելի լինել, որովհետև դիւցազնը, ինչքան էլ քաջ ու զօրեղ լինի, դիք, աստուած չէ, դիւցազնը, ինչքան էլ իւր տարաքներն անձնիշխանութեամբ կատարէ, նա դարձեալ մարդկային ներումնդ է, և նորա վերայ ևս ճնշում է աստուածային, դիւցային այն գերագոյն զօրութիւնը, որի ձեռքի սակ են թէ մարդիկ և թէ դիւցազներ, և որի կամքի մի արտայայտութիւնը միայն բաւական է, որ դիւցազնի բոլոր վիճակը փոխուի և նա հաւասարուի սովորական մարդուն։ Մեր աղգային վէպի մէջ աստուածային զօրութիւնը բռնում է ամենամեծ տեղը, և Աստուծու կամքով ձեռնարկած գործն է միայն յաջողութիւն գտնում. դիւցազնը, ամեն մի նեղ տեղն ընկած միջոցին, խոնարհութեամբ հնազանդւում է գերագոյն ուժի հրամանքին, որ իւր ճակատագիրն է, բայց միանգամայն և յոյս ունի, որ այդ գերագոյն ոյժն իւր բարերարութեամբ ձեռքից չի թողնիլ իւր դիւցազնին, որովհետև սա արդար է և սուրբ գործի համար է կռւում։ Դիւցազնի առ Աստուած դիմելու սովորական ձևն այս է.

«Օրհնեալ, բարերար Աստուած,
Քո հրամանքն էր շատ.
Հրամանք անես» և այլն։

Այպիսի մի ազգային երգով, որ հնութիւնից եկած վիպականութիւն ունի, հերոսները շատ անգամ դիմում են գերագոյն զօրութեանը, և նա կատարում է նրանց խնդիրքը. բայց կատարում է այն խնդիրքը, որ դիւցազնական ուժի սահմանից դուրս է, որ դիւցազնական անչափ ուժով անգամ կարելի չէ անել, ինչպէս՝ վէպի մէջ՝ հարաւ-քամի բերելը, և ուրիշները։ Իսկ ինչ որ վերաբերում է դիւցազնական ուժին, և այդ ուժով կատարելու հնարաւոր գործերին, հերոսի այդ դիւցազնական ոյժն Աստուծու անունը դիմելով չէ ամեն անգամ սաստկանում և չափից անցնում,

այլ Աստուած, ինչպէս գիտենք, այդ շնորհքը Խաչ-Պատարագին պատկերով մի անդամ ընդ միշտ արդէն տուել է Դաւթին և իւր հօրը, որովհետև նրանք արդար մարդիկ են, և այլ ևս նրանցից չէ վերցնում, քանի որ նրանք արդարութեամբ և ուխտապահութեամբ կը վարեն իրանց կեանքը։ Աստուած իւր զօրութեամբ միշտ նրանց հետ է, որոնք իւր արդարութեան ճանապարհով կ'ընթանան և Աստուած իւր այս շնորհքի բաշխումը ոչ թէ իւր ինքնակամութեան է թողնում, այլ հերոսի անձնակամութեանը,—ձիշդ քրիստոնէական գաղափար մարդուս անձնիշխանութեան մասին։ Առհասարակ մեր աղգային վէպը՝ հեղհեղած է կրօնական գաղափարներով, որոնք աւելի քրիստոնէական ժամանակին են պատկանում, քան թէ հեթանոսականին. և այս բնական է մեր աղգի համար, որի պատմական արտայայտութիւնը միայն եկեղեցու մէջ են ուզում տեսնել։

Աստուծուն սիրելի լինելն արդարութեամբ և անպարտելի զօրութիւն ստանալու միջնորդ «Խաչ-Պատարագին» ունենալը դեռ բաւական չէ. շատ էլ դիւցազնը բարոյական արժանաւորութիւն ունի և ներքին զօրութեամբ լիքն է, նորա արտաքինը դեռ մի և նոյն սոսկական մարդունն է. հասակը հասարակ մարդու հասակից վեր չէր կարող լինել, որովհետև՝ թէպէտև դիւցազնական սերունդ՝ բայց դեռ մանուկ էր. հագուստը հովուական հասարակ հագուստ էր, իսկ զէնքը ցուպ և հասարակ նետ ու աղեղ էր։ Դիւցազն իւր ներքին արժանաւորութեան հետ պէտք է ունենալ և դիւցազնի վայել արտաքին արժանաւորութիւն. նա պէտք է հսկայական յաղթանդամութիւն, քաջամարտիկ մարդու զէնք ու զրահներ և իշխանական հանդերձանք ունենալ։ Ժողովուրդն իւր սիրելի դիւցազն Դաւթին հագցնում է իւր հօր իշխանական հագուստը. «զլխու-զօաին», «կապէն-խարուկին», և «քամարը ի մէջքին», իսկ որ ամենից գլխաւորն է, նրան տալիս է «Թուրկէծակին», և «Գուռուկիկ—Ջալալին»։

Կայծակի-Թուրը, դա ամենանշանաւոր զէնքն է, որ մեր ժողովուրդը տալիս է իւր ամենից սիրելի հերոսներին։ Կայծակի-Թուրը թէպէտև երկրիս վերայ է արեւստուում, բայց նորա նիւթը երկրային չէ, այլ երկնային. նա ծնում է, ինչպէս «կայծակի» անունն իսկ ցոյց է տալիս, ամենազաղոր կայծակներից, որոնց առաջ անհատանելի բան չը կայ աչխարհիս վերայ, ուստի և Կայծակի-Թրից աւելի հատու սուսեր չը կայ երկրիս վերայ, և դիւցազնը, եթէ կատարեալ դիւցազն պէտք է լինի, պիտի ունենայ այդպիսի մի թուր։ Ավսո՛ս, որ մեր վէպի մէջ չէ լիշում թէ ինչպէս է Կայծակի-Թուրը ձեռք բերուել. որովհետև այդ թուրը Դաւթին իրրև հայրական ժառանգութիւն է ստանում, իսկ վէպի մէջ չը կայ Դաւթի հօր մասը, մինչև իսկ Դաւթի ծնունդն և առաջին երեխայութիւնը։ Մեր ժողովրդական աւանդութիւններից լայնի է քիչ ու շատ թէ ինչպէս է հերոսը ձեռք բերում Կայծակի-Թրի նիւթը։

Կան այնպիսի լեռներ, որոնց գլխին միշտ փոթորիկ է և միշտ կայծակներ են խփում. այդ կայծակները դեռևին խփում են և խկոն վերանում են երկինք, գետնի վերայ չեն մնում. Եթէ հերոսն այնքան սիրտ ունենայ, որ անվախ կերպով բարձրանայ կայծակի-սարը, և հեռը սանի թաց թաղիք, դնի սարի գլխին,—կայծակը, խփելով թաց թաղիքին, կը մնայ թաղիքի մէջ և հերոսը կարող է կայծակը բռնել, թերել ներքև և ուղած թուրը շինել։ Այս աւանդութեան հետ դոյդ գտնում ենք և մեր հին մատենագրութեան մէջ շանթ բառի ուրիշ գործածութիւնը. այն է, որ շանթ նշանակում է թէ կայծակ և թէ չիկացած երկաթ. բայց այդ՝ կայ և շանթեքար բառ, որ Անանիա Շիրակացին, Ի. դարում, իւր աստեղաբաշխութեան մէջ բացատրում է. «Ասեն ոմանք զշանթեքարն որոսմամբ հանդերձ անկեալ՝ նման կրիայի գլխոյ» (տես «Հայկազեան լեզ. բառ. ընդ., որի մէջ շանթեքարի համար ասում է՝ քար պատուական, որ կարծի անկեալ զոյդ ընդ շանթի)։ Շանթ և շանթեքար բառերի այս հին նշանակութիւնը ցոյց է տալիս, որ մեր ժողովրդի մէջ եղած արդի հաւատալիքը Կայծակի-Թրի ծագման մասին դալիս է աւելի ևս հին, առասպելական (միթական) ժամանակներից։

Կայծակի-Թրի հետ պէտք չէ մոռանալ և «Հաւլունի-Թուրը», որ գրեթէ նոյն յատկութիւններն ունի, ինչ որ Կայծակի-Թուրը, միայն ծագմամբ սուրիչ է։ Հ. Արուանձտեանը «Համով-Հոտով» մէջ այսպէս է դնում Հաւլունի-Թրի մասին. «Հաւլունի կը նշանակէ հաւու ուղնի. իբր թէ երկաթը կը մաներն կորեկի պէս, կուտան հաւերուն, կ'ուտեն, և անոնց ծերտերը ժողվելով կրակով կէրեն, ելած երկաթը կը լինի զուտ չալիկ և զարմանալի սուր ու կտրուն («Համով-Հոտով», երես 75)։ Հաւլունի-Թուրն աղդալին վէպի մէջ դուրս է դալիս Պարոն-Աստղկի ձեռքին, որ Դաւթի հօրեղբօր որդին է։ Հաւլունի-Թրի աւանդութիւնն ևս, ինչպէս Կայծակի-Թրինը, հնութիւնից է դալիս. աւանդութեամբ՝ բաղմալաղթ Տըրդաս թագաւորն ևս ունեցել է Հաւլունի-Թուր։

Բայց Հաւլունի և Կայծակի Թրերից, լինչատակում է դուրդ-լախտ, որ մեր հերոսների ամենասիրելի զէնքն է. դուրդի մասին մենք վերևում խօսացինք։ Դաւիթը, չը նայելով՝ որ ունէր Կայծակի-Թուր, Մսրամելիքի հետ թրով չէ կռուում, այլ լախտով, և այս ցոյց է տալիս, որ վէպի այդ մասը, այսինքն Դաւթի և Մսրամելիքի կռիւն աւելի հնութիւն ունի, քան թէ Կայծակի-Թրի զրուցը, որ աւելի հետագայ ժամանակի ծնունդ է նոյն իսկ իւր արևելեան։ բոլոր նախնական հերոսները, ինչպէս լուսնայ մէջ Հերակլէսը, կռուում են միայն լախտերով, որ մի պարզ ու բրիտ զէնք է, ինչպէս և իրանք հերոսները պարզ ու բրիտ են։ Հ. Արուանձտեանի վարկածում Կայծակի-Թուր չը կայ, բայց դորա փոխանակ Դաւիթն ունի խալխան—վահան, որ իւր գլխին է բռնում Մսրամելիքի հետ կռուելու ժամանակ։ Աւելացնենք այդ զէնքերի վերայ և նետ ու աղեղը, որ ունէր Դա-

վիթը, կը ստանանք դիւցազնի սպառազինութիւնը՝ Կայծակի կամ Հաւլուանի թուր, լախտ, վահան և նետ ու աղեղ։ Պէտք է նկատել, որ ազգային վէպի մէջ զէնքերն այսպէս են յիշւում, իսկ դրահաւորութիւն չը կայ, եթէ զրահներ չը համարենք «դլխու դեսուին, կապէն-իաբուկին, քամարն ի մէջքին», որոնք մենկնութեան են կարօտ և մենք դիժւարանում ենք բացատրել. բայց և այնպէս կարծում ենք, որ դրանք աւելի հաղուստ պէտք է լինին, քան թէ զրահներ։

Վերոյիշեալ զէնքերից թուրն ու լախտը դիւցազնի անրաժան ընկերներն են, բայց դիւցազնի համար կայ և մի ուրիշ անրաժան ու հաւատարիմ ընկեր. դա նորա ձին է, ձին, որ այնքան նշանաւոր դեր է կատարում ինչպէս ընդհանրապէս մեր բոլոր հէքիաթներում, այնպէս և մեր ազգային վէպում։ Դիւցազն առանց նժոյգի դիւցազն չէ. պարսից դիւցազն Ռուստամն իրան առանց ձիու վարձկան չէ համարում, և նա կարծում է, որ իրան միայն այն ժամանակ հսկայի տեղ կ՚ընդունեն, երբ որ ինքն իւր սիրելի Ռաշի վերայ է։ Լաւ ձիու համար հսկան իւր կեանքը կը տայ, որովհետև առանց ձիու չի կարող ոչ մի սխրագործութիւն կատարել. լաւ ձին հսկայի մարտակիցն է պատերազմի մէջ և նորա պահապանն ու պաշտպանն է թշնամիների յարձակմունքների դէմ. նա միանդամայն և հերոսի հաւատարիմ խորհրդականն է, որովհետև դիւցազնական ձիերը մեր հէքիաթներում, ինչպէս և մեր ազգային վէպի և ուրիշ ազգերի վէպերի մէջ, անրան արարածներ չեն, այլ բանաւոր, խօսուն արարածներ են. նրանք մինչև անդամ դուշակութեան շնորհք ունին, նախազգում են վտանգը և նախազդուշացնում են իրանց տիրոջը,—մի հանգամանք, որ վկայում է վէպի խորին հնութիւնը, այն ժամանակին, երբ որ մարդիկ աստուածացնում էին բոլոր բնութիւնը, և բնութեան բոլոր առարկաների, կենդանիների և նոյն իսկ անշունչ առարկաների մէջ երևակայում էին կենդանի ոգի և բանականութիւն։

Դիւցազնական ձիանքը մեզնում կոչւում են հրեղէն ձիանք, կրակէ ձիանք.—արդեօք կրակից շինած, թէ կրակ դարձած վազող ձիանք։ Աւելի հաւանական է, որ ոչ մէկը լինի և ոչ միւսը, այլ հրեղէն բառը ծագած է մի ուրիշ արմատից, որից դուրս է եկել և հուրի—հրեղէն կոչումը, որ տրւում է դերբնական, դիցական կին էակներին, հուրի, հուրնի-հրեղէն կամ հուրի-հրեղէն, և կամ լոկ հրեղէն աղջիկներին։ Մեր հրեղէնները կամ հուրիները ջրերի պաշտամունքի աստուածութեան են վերաբերում։ Մեզ թւում է թէ հուրի կոչումը նոյն է, ինչ որ հօրուտ կամ հօրուտ, որով հեթանոս հայերի մէջ ջրերի պահապան և խնամակալ ոգիներն էին կոչւում. իսկ հօրուտ կոչումը պարսից Հաուրուատ ամենասպանուալի կոչումն է, որ նոյնպէս ջրերի պահապան ոգի է եղել [1]։ Այդի

---

[1] Տե՛ս պ. Կ. Կոստանեանի «Հայոց հեթանոսական դրօշը», երես 33.

ժողովրդական հուրի (հուրիկ և հրեղէն մինչև այժմ կնոջ անուն է) բառն ևս հաուրուատ բառի ուրիշ նեղական ձևը պէտք է լինի [1]), որով և հուրի-հրեղէնները ներկայանում են իբրև հին հօրուատը կամ պարսկական հաուրուատը, այսինքն՝ ջրերի խնամակալ ոգիներ. և այս հակառակ չէ մեր արդի ժողովրդական հաւատալիքին հուրիների կամ հրեղէնների մասին, որոնք ապրում են ջրերի մէջ, առաւելապէս փոքր լճակների չատակում. Մինեղն ջրերի մէջ, հուրի—հրեղէն աղջիկների հետ ապրում են և հրեղէն ձիանք ու հրեղէն գոմէշներ, որոնք նոյն բնորոշ չատկութիւններն ունին, ինչ որ հրեղէն աղջիկները. Հրեղէն բառը աղջկան չատկացնելով, ցոյց է տալիս աղջկայ դերբնական, դիցական էակ, կամ, այսպէս ասած, դիցուհի լինելը, ինչու ուրեմն չ'ենթադրել թէ նոյն հրեղէն բառը, ձիու վերայ ևս դրուելով, ցոյց է տալիս ձիու դիցական կամ դերբնական էակ լինելը, քանի որ ապդոլիսի ձիանքը հրեղէն աղջիկների հետ միևնոյն տարրի մէջ են ապրում, և ունին դերբնական չատկութիւններ. և այս հակառակ չէ վէպի ոգուն, որի մէջ ինչպէս դիւցազները ծագմամբ դիցական էակներից են, այնպէս և նրանց ձիանքն ևս չատ անդամ դիցական էակներից կամ աստուածներից են գալիս, մինչև իսկ հսկաների զէնքերն երբեմն դիցական ծագում են ունենում։

Դաւթի ձին, Քուսկիկ-Զալալին, հրեղէն ձի է և ունի հրեղէն ձիու բոլոր չատկութիւնների հետ և բանականութիւն ու դերբնական ոյժ, այնպէս որ նորա մի աքացուց դոմի պատն ամրողջ չուռ է գալիս։ Հրեղէն ձի է և Պարոն-Աստղիկ ձին, որ թեւաւոր է և «մըչ երկինք, մըչ գետինք» թռչում է օդի մէջ և, ինչպէս հէքիաթների մէջ ասում են, «աստղերի հետ խաղ է անում»։ Զէնով-Ցովանի սպիտակ, կարմիր ու սև ձիերից Սև ձին նոյնպէս հրեղէն է և մի ակնթարթի մէջ ինչքան տարածութիւն ասես՝ կտրում է, նման Ռուստամի Ռաշին, որ փոթորկի պէս ուժեղ է, կայծակի պէս ալացող, թռչունի պէս թռչում է օդի մէջ, ձկան պէս լողում է ջրի մէջ, և որի վրայից ձիաւորն իւր արձակած նետից աւելի չուտ է հասնում թշնամուն։

Ուրիշ աւանդութիւններից գիտենք, որ հսկաներն երեք տեսակ են հրեղէն ձիանք ձեռք բերում։ Ինչպէս ասացինք, հրեղէն ձիերը հրեղէն աղջիկների և գոմէշների հետ ապրում են լճերի տակ. Հայաստանում չատ կան այդպիսի լճեր, որոնց մէջ, ժողովրդի հաւատալիքով, կենում են հրեղէն ձիեր, և այդ լճերը չատ անգամ կոչւում են «Ապդոր գետ», այսինքն «պավտակի լիճ». այդ լճերի ափերին արածող մատակ ձիերի և լճերի հրեղէն

---

1) Ինչպէս Թաչատուր—Թաչէի կամ Թաչի, Մաթէոս—Մաթէի կամ Մաթի և այլն. այնպէս և Հաուրուատ—Հաուրի կամ Հուրի, Հուրիկ։ Թերևս ուրիշ անգամ մեզ դէպ կինի աւելի ընդարձակ խօսել հայոց հին հեթանոսական դիցական էակների մասին արդի ժողովրդական հաւատալիքներից վերցրած։

ձիերի զուգաւորութիւնից ծնւում են ճեպ-ճերմակ և անարատ ձիեր. որոնք իսկապէս կէս հրեղէններ են լինում։ Բայց եթէ հերոսն ուզում է իսկական հրեղէն ձի ձեռք բերել, նա պէտք է լճերից „որսալ հրեղէն ձի. դորա համար հերոսը պէտք է թաց կենալ լուսնակի լճերի ափում և սպասէ այն ժամանակին, երբ որ հրեղէն ձիանքը, լճից դուրս ելած, իւաղ են անում իրար հետ լճափի արօտներում. լարմար վայրկեան գտնելով. նա պէտք է թռչի հրեղէններից մէկի վերայ և, եթէ կարող է, իրան պահէ ձիու մէջքին և ձիու աչքերն առժամանակ ծածկէ աղչիով։ Աչքերը բանալուց յետոյ ձին այլ ևս գէպի լիճը չի դնալ, այդ դէպի վերև, դէպի արեգակը կը թռչի, որ հսկային տայ արեգակին և ապրէ։ Անշուշտ սոյն գործողութեանն է ակնարկում և ազգային վէպի մէջ Փուռկիկ-Ջալալինի այս խօսքը. «Կարամ գքեզ տամ էրիգական՝ էրիցյա», որ ձին՝ ասում է Դաւթին, երբ որ սա նորա կողաշարը կոտրում է ասպանդակով խփելով։—Հսկան եթէ խելք ու ճարպիկ մէկն է, երբ որ տեսնէ թէ հրեղէն ձին իրան դէպի արեգակն է տանում, պէտք է մտնի ձիու փորի տակ և ասէ ձիուն. «եթէ արեգակին տաս, առաջ դու պիտի ապրես, յետոյ ես։ Ձին կը տեսնէ, որ իւր դիտաւորութիւնը՝ հերոսին արեգակին տալը անյաջող պիտի լինի, որովհետև առաջ ինքը պիտի ապրի, կը սկսի բարձունքից արագ սլանալ դէպի ներքև, որ փորի տակ մտած հերոսին գետնին խփէ։ Հերոսն իսկոյն պէտք է ուղղի մէջքի վերայ և ասէ. «առաջ դու գետին կը մտնես, յետոյ ես։ Այս գործողութիւնը կատարելուց յետոյ՝ հրեղէնը կը ճանաչէ, որ իւր հնձաւորը հասարակ մահկանացու չէ, կը հպատակէ նրան, իրրև իւր տիրոջ, և այլ ևս նրանից չի բաժանուիլ։

Բացի լճերից այս երկու եղանակով հրեղէն ձի ձեռք բերելուց, հրսկանները հրեղէն ձիու տէր են դառնում և դևերի ձեռքից խլելով։ Դևերը, առաւելապէս Մութ-աշխարհում ապրող դևերը, իրանց ստորերկրեայ գբերում կամ այրերում ունենում են նոյնպէս հրեղէն ձիեր, որոնցից, սակայն, նրանք շատ էլ չեն օգտւում. որովհետև դևերն իրանք արագավազ են, և շատերը մինչև անգամ թեաւոր են և թռչում են օդի մէջ։ Հսկանները դևերին կոտորելուց յետոյ, լափչտակում են նրանցից հրեղէն ձիերն և իրանք են բանեցնում։ Հ. Սրուանձտեանի վարիանտով Դաւիթը, քառասուն դևերին կոտորելուց յետոյ, նրանց այրից հանում է և մի քուռակ, որի զօրութիւնը լեղուով չի պատմիլ. այդ քուռակը պէտք է լինի և Փուռկիկ-Ջալալինը, թէպէտ և այդ քուռակը ոչ մի դեր չէ կատարում վէպի մէջ, և նորա անունն անգամ վէպի շարունակութեան մէջ չէ լիշւում։ Բայց այստեղ մի անհամաձայնութիւն է դուրս գալիս երկու վարիանտի մէջ, այն է, որ հ. Սրուանձտեանի վարիանտով Դաւիթն է ձեռք բերում հրեղէն ձին, իսկ մեր վարիանտով Փուռկիկ-Ջալալինը Դաւթի հօրն էր. այդ անհամաձայնութիւնը կը պարզվի, եթէ ընդունելու լինինք, ինչպէս մենք կարծում ենք, որ հ. Սրուանձտեանի վարիանտի մէջ միացած են

Թուլան և Թլոր Դաւթի վէպերը, և մինչև Դաւթի և Մորամելիքի մենամարտութիւնը (Ասպար կալնան և զալա էրէցին...) եղած մասը վերաբերում է Թուլան Դաւթին, որ Թլոր Դաւթի հայրը պէտք է լինի, որով և մեր վարիանտի համեմատ՝ Ռուսկիկ-Զալալինը, ինչպէս և Խաչ-Պատարագինը (ս. Նշան) Թլոր Դաւթին իւր հօրից կը դան իբրև ժառանգութիւն։ Այս ենթադրութիւնն անելու հիմքերի մասին թողնում ենք այստեղ դրելը, միայն այսքանը պէտք է ասել, որ այս ենթադրութեամբ երկու վարիանտի մէջ եղած բոլոր անհամաձայնութիւնները պարզւում են և երկուսից կազմւում է մի կապակցական ամբողջ վէպ։ Դանք մեր խօսքի շարունակութեանը։

Դաւիթն ունի, ինչպէս տեսանք, դիւցազնին վայել զրահաւորութիւնն ու հանդերձանքը. բայց նա դեռ մանուկ է և չ'ունի դիւցազնի հսկայահասակ յաղթանդամութիւնը. նա միայն իւր հօրեղբօր կին Սասի աչքին չէ ծիծաղելի իւր արտաքինով, որովհետև իւր գլխու զօրին այնքան մեծ է իրան համար, որ քառասուն լիտր բամբակ է մէջը գրեալ, որ գլխին դալ, մէջքի քամբը քառասուն փութ է եկել, իսկ Կայծակի-Թուրը Ռուսկիկ-Զալալինի վերալ նստած անգամ գետնի հետ քարշ է գնում։ Հրեղէն Ռուսկիկ-Զալալինն անգամ զգում է իւր տիրոջ ծաղրական դրութիւնը, բայց և նա դիտէ այդ դրութիւնից դուրս գալու ճարը։ Դորա ճարը կաթնաղբիւրն է, աղբիւրը, որ մեր ժողովրդի ամենասիրելի ջուրն է, անմահութեան կաթնաղբիւրը, որ այնքան մեծ դեր է կատարում և մեր հէքիաթների մէջ։ Ամեն աղբիւր կաթնաղբիւր չէ։ Ցիշենք միայն այն, որ անմահութեան աղբիւրի ջուրը մահից յետ է դարձնում մարդուս, ամեն մի վէրք ու ցաւ լաւացնում, նորոգում է, աչքերը լուսաւորում և ոյժ ու կարողութիւն է տալիս խմողին։ Հէքիաթների մէջ հերոսները, վէրքի կամ ախտի մէջ նեղն ընկած հանգամանքում, անմահութեան աղբիւրին են դիմում. նորա մի կաթիլ ջուրը ածում են վիրաւորի կամ ախտաւորի վերալ և նա լաւացնում է, մինչև անգամ մեռելին յարութիւն է տալիս. բայց անմահութեան աղբիւրից ջուր բերելն էլ հեշտ չէ. որովհետև աղբիւրը շրջապատած է ամենաղժուար պարագաներով. նրան պահապան են վիշապներ և ամեն տեսակ գազաններ ու հրէշներ, որոնք արգելում են անմահութեան ջուրը մարդկային ձեռքն անցնելուն։ Հերոսը պէտք է այդ հրէշների դէմ կռւի աղբիւրից ջուր վերցնելու համար։

Ազգային վէպի մէջ ևս կայ մի այդպիսի աղբիւր, որ Դաւթի հօրն էր պատկանում, որի մօտ թերևս շատ անգամ գալիս էր նա, ջրից խմում և մօտին պառկելով կազդուրում ու նոր ոյժ ու զօրութիւն առնում, նոր սքիրագործութիւններ անելու համար։ Այդ բանը տեսած պիտի լինէր Ռուսկիկ-Զալալինը, որ իւր տէր Դաւթին ուղղակի դէպի կաթնաղբիւրն է տանում. Դաւիթը նորա ջրից խմում է, հաց ուտում և ափին մի ժամի չափ քուն մտնում. քուն հրաշալի, որ պէտք է նրան աղբիւրի ջրի զօրու-

թեամբ ամենամեծ կերպարանափոխութեան ենթարկէր։ Նա քնից ելաւ.

«Ցնսաւ էնպէսն ի լցուլ,
Էնպէսն ի խաստացի,
Էնպէսն ի զորութիւն, ոժ առլ,
Որ չափալամիչ ի եղի»։

Այժմ նորա հագուստն ու զէնքերը նրան այնպէս են գալիս, ինչպէս իւր սեպհականը, որովհետև նա մարմնով արդէն դիւթական ջրի զորութեամբ վիթխարի հսկայ է դարձած. այժմ նա կարող է համարձակ, առանց մէկի ծիծաղը շարժելու դուրս գալ անհեթեթ հսկայ Մսրամելիքի դէմ։

Սակայն ձին դեռ ևս չէ հաւատում իւր տիրոջ հսկայական ուժին, մանաւանդ որ նա մի անգամ մոռացել էր իւր ասած խօսքը. ձին խորհուրդ է տալիս Դաւթին, նախ քան պատերազմ գնալը, իւր ոյժը փորձել դաշտի մէջ տնկած երկաթէ սեան վերայ։ Դաւիթը Կայծակի-Թրով այնպիսի մի հարուած է իջեցնում երկաթէ սեանը, որ

«....Թուր սուն կտրեց,
Կալամ վըր կալամին կայնաւ,
Շուռ չառէց՝ որ իջնէր դետին»։

Սարսափելի արագութիւն և ոյժ, որ տատանում անգամ չէ պատճառում սեանը, և որ դիւցազնին անգամ կասկածանքի մէջ է թողնում իւր ձեռքի ուժի վերայ, այնպէս որ նա լուսահատուած լալիս, ասում է.

«Ձեռնիկ, տիւ կոտուր կենէր,
Որ զարկեցի, թուր չը կտրեց.
Աչքիկ, տիւ խաւար կենէր,
Որ էսա բաներ ես չը տեսնէր»։
Ասաց,—ձեռ կոտրաւ, աչք խաւարաւ։
Ասծու հրամանքիւ ձին լեղու էկաւ, ասաց.
—Քեռ բերան կոտրուլ, տէր իմ,
Քամի մ'ուղէ Ասծուց։
Դաւիթ երգեց, ասաց.
«Օրհնեալ, բարերար Աստուած,
Քեռ հրամանքն է շատ.
Հրամանք անես՝ հարաւ-քամին իջնէր,
Էսա սուն լէ վիրարուց կտոր էնէր»։
Ասծու հրամանքիւ հարաւ-քամին որ էկաւ,
Սուն շուռ ետուր,

Մէ կտոր էստեխ ընկաւ,
Մէ կտոր էնտեխ ընկաւ։ Ասայ.
«Զեռնեմ, տիւ կանաչ էլնէր,
Աչքիկ, տիւ լուսով էլնէր»։
Ասծու հրամանքիւ ձեռ սաղայաւ,
Աչքեր լէ լուսաւորուան։

Իւր հսկայական ուժը փորձելու այս մի եղանակի մէջ, որ ուրիշ աղգերի վէպերի մէջ ևս կայ ուրիշ ձևով, որքան նախնական պարզութեամբ արտայայտուում է գերագոյն էակի՝ Աստուծու կամ դիւց, դիւցազնի և իւր դիւցազնական—հրեղէն ձիու լարաբերութիւններն իրար հետ. և որքան սկզբնական կենդանի հաւատքով լցած է թէ ինքը դիւցազնը, թէ այն նախնի մարդը, որ մի քանի անարուեստ խօսքերով ստեղծել և լայանել է իւր կեանքի այս պարզ նկարագիրը, և թէ նա, որ մինչև մեր օրերը դարձեալ հաւատքով լցած կրկնում է նոյնը։ Դաւիթի ուժի փորձը, որով գերագոյն զօրութեան հաճութիւնն իւր կողմը լինելն ևս իմացաւ, չաջող էր, և նա ամենայն վստահութեամբ լարձակւում է Մորամելիքի բանակի վերայ. բայց վէպի ողու հաւնմատ, պիտի կուլին ոչ թէ բանակ բանակի հետ կամ մի դիւցազն ամբողջ բանակի հետ, այլ դիւցազն դիւցազնի հետ. և ահա՝ Դաւիթն ու Մորամելիքը ժեռամարտում են, և Դաւիթը, Մորամելիքին ևս լաղթելով ու սպանելով, հանդիսանում է իբրև կատարեալ դիւցազն այն բոլոր լատկութիւններով և արարքներով, որ պէտք է ունենայ դիւցազնը։

(Կը շարունակուի)